

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.am

N 032508

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վահե Գևորգյան

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ բաժնեատերերին

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարծիք

Մենք առդիտի ենք ենթարկել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք առդիտն անցկացրել ենք առդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Առդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԻ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր առդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված առդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի վրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Լուսինա Հովհաննիսյան

Աուդիտոր

08 մայիս 2025թ.

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

		2024թ. դեկտեմբերի 31-ի Օանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	672,849	3,496
Ոչ նյութական ակտիվներ	5	104,704	118,644
Հետաձգված հարկային ակտիվներ	6	2,346	1,801
		779,899	123,941
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	134,501	54,444
Դրամական միջոցներ բանկերում	8	195,107	171,552
		329,608	225,996
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,109,507	349,937
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>	9		
Բաժնետիրական կապիտալ		50	50
Կուտակված շահույթ		448,000	303,248
Պահուստային կապիտալ		8	8
		448,058	303,306
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	10	462,376	-
		462,376	-
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	64,347	46,631
Վարկեր և փոխառություններ		134,726	-
		199,073	46,631
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,109,507	349,937

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մայիսի 8-ին:

Ավետ Մանուկյան
Տնօրեն




Թի Լքաունթ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Շուշաննա Մարգարյան

Գլխ. հաշվապահ




1-20 Օանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՀԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	Ծանոթ. 12	867,796	522,992
		867,796	522,992
Ծրագրի սպասարկման ծախսեր		(291,157)	(214,895)
Աշխատավարձեր և հարակից հարկեր		(227,988)	(150,285)
Գործուղման ծախսեր		(402)	(2,488)
Մերվերային համակարգի սպասարկման ծախսեր		(32,036)	(23,236)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(11,376)	(2,626)
Ամորտիզացիոն և մաշվածության ծախսեր		(63,557)	(15,712)
Տարածքի վարձակալության ծախսեր	13	(10,450)	(8,900)
Լաբորատոր թեստերի արդյունքների վերաբերյալ ծանուցումների առաքման ծառայություն		(15)	(98)
Վճարային ծառայության մոդուլի սպասարկում		(4,390)	(2,030)
Հաշվապահական ծախսեր		(6,000)	(5,000)
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր		(2,970)	(2,305)
Բուժաշխատողների ռեգիստրի մշակման ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունների գծով կատարված ծախսեր		(4,121)	(15,280)
Մարքեթինգի և հանրային կապերի ծախսեր		(683)	(655)
Կոմունալ և գրասենյակային ծախսեր		(7,503)	(6,273)
Հեռախոսային և ինտերնետ կապի ծախսեր		(5,149)	(5,096)
Ապահովագրական ծախսեր		(6,429)	(6,164)
Բանկային ծախսեր		(247)	(537)
SMS ծանուցումների տրամադրման ծախսեր		(1,401)	-
Գործառնական այլ ծախսեր		(4,121)	(1,913)
Գործառնական գործունեությունից շահույթ		187,801	59,499

1-20 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Ֆինանսական ծախսեր		(18,484)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(1,653)	1,063
Շահույթ մինչև հարկերը		167,664	60,562
Շահութահարկի գծով ծախս	14	(22,912)	(10,920)
Տարվա շահույթ		144,752	49,642
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		144,752	49,642

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	50	8	253,606	253,664
Տարվա զուտ շահույթ	-	-	49,642	49,642
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	49,642	49,642
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2023 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	8	303,248	303,306
Տարվա զուտ շահույթ	-	-	144,752	144,752
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	144,752	144,752
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	8	448,000	448,058

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ծառայությունների իրացումից մուտքեր	1,009,874	617,505
Այլ մուտքեր գործառնական գործունեությունից	-	1,174
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	1,009,874	618,679
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ աշխատակիցներին	(168,547)	(132,107)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ	(108,752)	(137,965)
Վճարումներ մատակարարներին	(424,810)	(276,256)
Վճարված շահութահարկ	(10,800)	(10,195)
Այլ վճարներ գործառնական գործունեությունից	(994)	(3,205)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(713,903)	(559,728)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	295,971	58,951
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(849,751)	(11,304)
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	(849,751)	(11,304)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(849,751)	(11,304)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	646,000	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	646,000	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վճարված տոկոսներ	(14,019)	-
Վճարված վարկեր և փոխառություններ	(50,133)	-
Այլ վճարներ ֆինանսավորման գործունեությունից	(3,230)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	(67,382)	-
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր	578,618	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	24,838	47,647
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,283)	1,043
Դրամական միջոցների մնացորդներ տարեսկզբին	171,552	122,862
Դրամական միջոցների մնացորդներ տարեվերջին	195,107	171,552